բազմական գործողություններ սկսել հայկական սահմանների վրա, հայերի դէմ, Կիլիկիայի սահմաններում՝ Ֆրանսացիների դէմ։ Դաղստանում կազմուած կանաչ բանակը՝ Էնվէրի, Նուրիի և Խալիլի ղեկավարութեամբ՝ պէտք է տպրիլի սկզբներին աշխատէ մտնել Բագու։ Ադրբէջանեան զօրքերը պէտք է ցոյց տան կեղծ-խաբուսիկ դիմադրութիւն, որպէսզի կարողանան իրենց արդարացնել դաշնակիցների հանդէպ։ Միանալով կանաչ բանակին՝ ադրբէջանեան զօրքերը պէտք է առիթ որոնեն ընդհարուելու Հայաստանի հետ և Անատոլիայում գտնուող թիւրք զօրքերի հետ միասին անցնեն Հայաստանի սահմաններն ու սկսեն զինուորական գործողութիւններ Հայոց Հանրապետութեան դէմ»։

Մի ուրիշ վկայութիւն. յայտնի կոմունիստ Սուլթան Գուլիևը 1920թ. մայիսին գրում էր «Իզվեստիա»-յում. «Միլլի կազմակերպութիւնը Դենիկինի Մոսկուայի վրա գործած յարձակման ժամանակ նրա թիկունքում առաջացրեց ապստամբութիւն և ստիպեց կուի վճռական բոլշևիկներին նրա բանակից մի քանի զօրամասեր ուղղել դէպի յետ՝ ճնշելու համար ապստամբութիւնը։ Այդ ձևով է աշխատել «Միլլի կազմակերպութիւնը» և Բաթումի, Կարսի, Արդահանի շրջաններում։ Ադրբէջանի բանակում աշխատող տաճկական սպաները գաղտնի քարոզչութիւն էին անում միանալու Խորհրդային Ռուսաստանի հետ։

Բաղաքական այդ դիծը «Միլլի կազմակերպութիւնն» ունէլի պարզօրէն ցուցահանեց դաշնակիցների Պոլիսը գրաւելուց և թրքական ազգային երեսփոխանական ժողովը ցրելուց յետոյ։ Բագուի յեղաշրջումից ամիս ու կէս առաջ այնտեղ հասաւ Մուստաֆա Քեմալի յատուկ մի պատուիրակութիւնը յայտնելու համար, որ Անատոլուի ապստամբները ցանկանում են յարաբերութեան մէջ մտնել Խորհրդային Ռուսաստանի հետ և առաջարկում նրան կամ ուղարկել Անատոլու իրենց պատուիրակներին, կամ ընդունել իրենց առաքելութիւնը»։

1926թ. փետր. 1-ին, Անգորայի անկախութեան տոնանի առթիվ, Էրզրումի ըմբոստութեան դատավարութեան միջոցին, ամբաստանեալներից մէկը՝ հանդստեան կոչուած հարիւրապետ գրավաճառ Իսմայիլ էֆէնտին հետևեալ ուշագրաւ ցուցումները տուեց։ Նա յայտնեց, որ «336-ին Քեազիմ Կարաբեքիր փաշայի հրամանով գնաց Բագու արևելեան ազգերի համաժողովին մասնակցելու համար. իր հետ ուրիշ ընկերներ էլ ունէր։ Բագուում այդ միջոցին գումարուած էր նաև մի կոմունիստական համաժողով. իրենք այդ համաժողովին մասնակցեցին լոկ իբրև խորհրդատուներ։ Համաժողովին մասնակցեցին նաև Մուստաֆա Սուբհի, Բէհաէդդին բէյերը, Էնվէր փաշան, Քիւչուք Թալէաթ բէյը»։

Իր ցուցմունքները շարունակելով Իսմայիլ էֆ. ասաց. «Քեազիմ Կարաբեքիր փաշան իր բանակով կատարելապէս դէպի համայնավարութիւն էր գնում։ Հասան Կալէում զինուորներն ու սպաները միասին էին լացում բաղնիքում և միասին էին ճաշում։ Փորձ եղաւ համայնավարութեան նմանող մի շարժում առաջ բերելու։ Նրա գլուխն էր գտնուում Բէհաէդդին Շաքիրը։ Մի շարք ծրագրներ էին ուղարկուել Էրզրում. բայց նրանք լաւ չէին. չփոթութիւն յարուցանելու բնոյթն ունէին։ Դրա վրա տեսնուեցինք Արիֆ և Շիւքրի բէյերի հետ և որոշեցինք մեր յարաբերութիւնները խզել նրանցից։ Այդ միջոցին Քեազիմ Կարաբեքիր փաշան արդէն այնպիսի նահանջ էր արել համայնավարութիւնից, որ դուք անգամ կը զարմանայիք։ Այդ միջոցին կազմուեց Նուիրականութեանց Պահպանման Ընկերութիւնը։ Մուստաֆա Սուբհին Բագուում արդէն գլուխ էր բերել իր կազմակերպութիւնը, զինուորներին